նմա զվնաս անցորդաց, և խնդրեաց փակել զդուռն զայն և բանալ 'ի կողմն հիւսիսոյ։ Դատաւորն ինքնին եկ 'ի քննութիւն տեղւոյն, և չգտեալ վնաս և կամ հակառակ ինչ օրինաց. հրամայեաց փոխել զդուռն և նորոգել զվանս։

Իսկ Դաւիթ եպիսկոպոս ետ բառնալ անտի զդուռն և զտեղին ետից քարամբք, և 'ի կողմն հիւսիսոյ արտաքոյ պարսպի վանաց կից յորմն էր սենեակ մի, որոյ դուռն բանայր 'ի ներքուստ. ետ բառնալ զայն անտի, և ընդարձակեալ զտեղին, եբաց անտի զարտաքին դուռն վանաց, և արար ճանապարհ յատուկ սակս միարանաց. որպէս երևի մինչև ցայսօր ժամանակի. 'ի ՌՄ Մուհարրէմ, ՈՂԷ (1585)։

Ժողովուրդք Ցունաց բնակեալք յԵրուսաղէմ, ժողովեցան յաւուր միում 'ի տաճարն Ս. Յարութեան, և 'ի գիշերին յայնմիկ արբեալ շուայտեցան 'ի գինւոյ, և բանս եղեալ ընդ միմեանս, իբրև զազան կատաղի սրով յարձակեցան 'ի վերայ ուխտաւորացն Հայոց՝ որք էին անդ, և եղեւ աղմուկ և խռովութիւն մեծ, հարկանէին զիրեարս, ասա պատառեցին զպատկերս, խորտակեցին զկանթեղս, և զամենայն ինչ զոր միանգամ տեսին աչք նոցա։ Եհաս լուր խռովութեանն 'ի վանս Ս. Յակոբայ, Կիրակոս վարդապետ Գարաճայ կոչեցեալ՝ փութայց առ դատաւորն՝ ուր եդիտ ըզքաղաքապետն, եւ պատմեաց առաջի նոցա զանկարգութիւնս Ցունաց և զվնասն որ եղեւ 'ի տաճարի անդ։ Իսկ դատաւորն առաքեաց զոմանս և ետ ըմբռնել զխռովիչսն, և 'ի լինել հարցափորձի յատենի անդ, յուրասա եկին ամենեքեան, թէ ոչ երբէք արարեալ են զայնպիսի իրս։ Սակայն Կիրակոս վարդապետ կացոյց վկայս և հաստատեաց 'ի վերայ նոցա, զոր միանգամ արարեալ էին, և դատաւորն պատուհասեաց զնոսա գանիւք. 'ի ՌՅ ճէմազիլ էվվէլ ՈՂԸ (1589)։ Դաւիթ եպիսկոպոս տայր նորոգել զորմն Հրեշտակապետի վանաց, եւ դնէր զանկեալ քարինս 'ի տեղի իւրեանց, իսկ քաղաքապետն կալեալ զգործաւորսն եդ 'ի բանտի, պատճառելով թէ առանց հրամանի զնոր չինուածս առնէք։ Դաւիթ եպիսկոպոս ջանայր բազմօք չիջուցանել զցասումն նորա, և 'ի չհանդարտիլ նորա՝ ազդ արար դատաւորին, և խնդրեաց ելանել 'ի քննու-